# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր
համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ. 4 շ., Հեռ. (094)
248414 , geghadir.kotayq@mta.gov.am

N 176
*10 հուլիս 2020թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ,

<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ղեկավարի թիվ 45-Ա և 46-Ա որոշումները:

Առդիր 3 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Մուրադյան*
*Հեռ. 077161037*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2020թվականի N 45-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ԹԻՎ42-Ա ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 44-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ որոշում եմ.

1.Համայնքի ղեկավարի 2020թվականի հունիսի 23-ի<<Հողի նպատակային նշանակությունը փոխելու և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին>>N42-Ա և 2020թվականի հունիսի 26-ի<<Հողի նպատակային նշանակությունը փոխելու և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին>>N44-Ա որոշումների 1-ին կետում <<նշանակության>>բառից հետո գրված<<խառը >>բառը փոխարինել <<բնակելի>> բառով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 20թ. հուլիսի 2
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2020թվականի N 46-Ա

### ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N36-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արթուր Զաքարյանի դիմումը,որով հայտնել է սեփականության իրավունքով իրեն պատկանող Գեղադիր համայնքի 07-022-030-001 կադաստրային ծածկագրով 346 քառակուսի մետր բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում տեղադրված է<<ԱրմենՏել>> ՓԲԸ-ի բջջային համակարգի սարքավորումներ/բջջային և ռադիոռելևային ալեհավաքներ/ բջջային կապի ծառայությունների համար:
Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոմամբ հաստատված կարգի,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 37-րդ հոդվածի, և հաշվի առնելով այն,որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի և տեղում կատարած ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված ցանկում,ալեհավաքների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,տեղադրված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների կամ անվտանգության գոտիներում ,տեղադրված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով ,չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝որոշում եմ.

1.Արթուր Հովհաննեսի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող Գեղադիր գյուղի 7-րդ փողոցի 1-ին հասցեի 07-022-030-001 կադաստրային ծածկագրով 346քառակուսի մետր բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել էներգետիկայի,տրանսպորտի,կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներիհողերի կատեգորիա,իսկ գործառնական նշանակությունը՝կապի :

2.Նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան,ընթացիկ հաշվառման և հողային հաշվեկշռում:
3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Թ.Մուդոյանի վրա:
4.ՈՒԺը կորցրած ժանաչել համայնքի ղեկավարի 2020թվականի մայիսի 26-ի<<Հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին>>N36-Ա որոշումը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Զաքարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

"20 20 թ. հուլիսի 7
գ.Գեղաոդիր